Արձանագրություն 3

ՀՀ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/38 ծածկագրով «Բժշկական սարքավորումների» ձեռքբերման նպատակով կազմակերպված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Արարատ

19.09.2025թ.
Ժ. 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Քենդրջյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Նունե Կարապետյան (ԳԱ)
Արտակ Զաքարյան (ԳԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Մելքոնյան (ՄՀՄ)

1. Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացված հայտերի անհամապատասխանության շտկման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն և «Կվանտա» ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամկետում շտկել են հայտերում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընտրված մասնակից ճանաչելու մասին

2.1 Հիմք ընդունելով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքը՝ հանձնաժողովը որոշեց N1 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ին, N2 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Կվանտա» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3. դեմ – **0**:

3. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

3.1. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու մասին հայտարարությունը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

բ) ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

գ) ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը ծանուցել անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ **0**:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

4.1. **ՀՀ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/38** ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը 11:00-ին, հասցեն ք. Արարատ, Շահումյան 34:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ **0**:

Հանձ. Նախագահ (ԳԱՊ)՝ _____ Կ.Քենդրջյան

Անդամներ՝ (ԳԱ) _____ Ն.Կարապետյան

(ԳԱ) _____ Ա.Զաքարյան

Քարտուղար (ՄՀՄ)՝ _____ Կ. Մելքոնյան